

Հայ-վրացական քննարկումներ

Աշխատանքային այցով Թբիլիսիում էր ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ զեներալ-մայոր Մուշեղ Ղազարյանի գլխավորած պատվիրակությունը: Ներքին գործերի նախարար Գիորգի Մզբրիշվիլիի հետ քննարկվել են երկու երկրների արտակարգ իրավիճակների կառավարման համար պատասխանատու կառույցների համագործակցության հետ կապված հարցեր:

Տես՝ նաև էջ 2



N 40 (688) 27.10-2.11 2017



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐ

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐ

911 Արտակարգ դեպքեր

ՀՀ ԱԻՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ, ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ

Նոյեմբերի 1-17-ը Հայաստանում կլինի ճարտարապետական միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) պատվիրակությունը Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչների հետ «Ճգնաժամային և աղետների ռիսկի կառավարման հանրային իրազեկման ցանց» ծրագրով համա-

գործակցության ուղղությունները քննարկելու նպատակով: Ճարտարապետական պատվիրակության ղեկավարն է Ուզբեկստանում ՃՄՀԳ գլխավոր ներկայացուցիչ Կաջուտոչի Ֆուշիմին:

Ճարտարապետները հանդիպումներ կունենան փրկարար ծառայության, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավարու-

թյան, աղետների ռիսկի կառավարման ոլորտում ծրագրեր իրականացնող միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ՝ ՄԱԿ-ի մարդասիրական գործերի համակարգման գրասենյակ, զարգացման ծրագրեր:

Տես նաև էջ 2

Կարևոր

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



էջ 2

ԱՌԱՆՑ ԶՈՐՍ ՊԱՏԻ



էջ 3

ԳԱԿԱՌԻ ՀՕԶ-Ի ՕՂԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ



էջ 5

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԶԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ



էջ 5



Գործակցություն ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՍ ՆՈՐ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Այս շաբաթ երևանում անցկացված Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին մասնակցելու համար Հայաստան էին ժամանել Եվրասիական տնտեսական միության երկրների կառավարությունների ղեկավարները: Պատեհությունն օգտագործելով՝ Հայաստանի և Ռուսաստանի կառավարությունների ղեկավարները ստորագրել են մի շարք ուշագրավ փաստաթղթեր:

Արտադրական անվտանգության կանոնակարգման ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր են ստորագրել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը և ՌԴ Էկոլոգիական, տեխնոլոգիական և ատոմային վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար Ալեքսեյ Ալյոշինը:

Միջազգային ավտոմոբիլային

հաղորդակցության մասին համաձայնագիր են ստորագրել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը և ՌԴ տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովը:

Հայաստանի և Ռուսաստանի միջև ռուսմիջուցում միջազգային էլեկտրակապի ծառայության սակագների նվազեցման վերաբերյալ փոխընթերցման հուշագիր են ստորագրել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը և Ռուսաստանի կապի և զանգվածային հաղորդակցության նախարար Նիկոլայ Նիկոլայիցովը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և ՌԴ Սարատովի մարզի կառավարության միջև մտադրությունների մասին արձանագրություն են ստորագրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը և Սարատովի նահանգապետ Վալերի Ռադակը:

Կարեն Կարապետյանի և Դմիտրի Մեդվեդևի հետ առանձնազրույցից և ընդլայնված կազմով բանակցություններից և փաստաթղթերի ստորագրումից հետո Կարեն Կարապետյանը և Դմիտրի Մեդվեդևը համդես են եկել հանդիպման արդյունքներն ամփոփող հայտարարություններով:

Կողմերն արձանագրել են, որ մեր երկրների դաշնակցային հարաբե-

րությունները տարեցտարի դինամիկ զարգանում են: Այս համդիպմանը քննարկվել են և՛ ներդրումային, և՛ այլ ծրագրերի իրականացման հնարավորությունները: Հայտարարվել է, որ ստորագրված փաստաթղթերը կնպաստեն երկու երկրների համագործակցության հետագա զարգացմանն ու ամրապնդմանը:

Արտադրական անվտանգության կանոնակարգման ոլորտում համագործակցության համաձայնագրի մասին առավել մանրամասն մերթերթի առաջիկա համարներից մեկում:



Աջակցություն

Սոցիալական աջակցություն ստացող 77 սահմանամերձ համայնքների 5-12-րդ դասարանների սովորողների դասագրքերի վարձավճարների և 77 բարձրագույն ուսհաստատություններում սովորող սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցումը կազմակերպելու նպատակով գործադիր ընդունել է համապատասխան որոշում:

ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ, ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ

Սկիզբը էջ 1

Հայ-ճապոնական «արտակարգ» համագործակցությունը 12 տարվա պատմություն ունի: 2005 թվականի հունիսի 8-ին ստորագրված «Հայ-ճապոնական տեխնիկական համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակներում ճապոնիական Հայաստանին է տրամադրել մոտ 3 տասնյակ հրշեջ-փրկարարական մեքենա, վեց մեքենայից բաղկացած շարժական կառավարման կայան:

Ճապոնացի մասնագետների օգնությամբ և մասնակցությամբ ծրագրեր են իրականացվել սեյսմիկ անվտանգության, տղանքների դեմ պայքարի, աղետների ռիսկի նվազեցման-կառավարման ոլորտներում, բազմաթիվ հայաստանցի փրկարարներ վերապատրաստման, որակի բարձրացման դասընթացներ են անցել ճապոնիայում:

Այս տարվա սեպտեմբերի 7-ին Հայաստան-ճապոնիա դիվանագիտական հարաբերություններ հաստատելու 25-ամյակին, արտակարգ իրավիճակների նախարարության և ճապոնայի միջազգային համագործակցության գործակալության միջև կնքվեց հերթական պայմանագիրը. «Հակահրդեհային սարքավորումների բարելավման ծրագիր» դրամաշնորհի համաձայնագիր 14 մլն դոլար արժեքով:

Ըստ համաձայնագրի, ճապոնիան Հայաստանին կտրամադրի հրշեջ-փրկարարական նոր մեքենաներ, որոնք կհատկացվեն Լոռու, Սյունիքի և Շիրակի փրկարարական կազմավորումներին: Այս մարզերում կան համայնքներ, որոնք սպասարկող հրշեջ-փրկարարական ջոկատներից հեռու են 32-48 կմ, իսկ այսօր փրկարարների տրամադրության տակ եղած հին և մաշված մեքենաները և բարձրլեռնային ճանապարհները դանդաղեցնում են արձագանքման արագությունը:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱԿՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունը հաստատել է քաղաքացիական տրաշտոյան 2018-ի հիմնական միջոցառումների տվյալները

ՀՀ ԱՊ նախարարության առաջարկով կառավարությունը հոկտեմբերի 26-ին հաստատել է «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018 թվականի նախապատրաստման կազմակերպական ցուցումներին ու ուղղություններին և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018-ի հիմնական միջոցառումների պլանը»:

Փաստաթուղթը մշակել են նախարարության և պետական կառավարման շահագրգիռ այլ մարմինների մասնագետները: Պլանի ընդունումը մշանակում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության իրականացում: Փաստաթուղթը հնարավորություն կտա առանձնացնել ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների 2018-ի նախապատրաստման գլխավոր խնդիրները և դրանց կատարման համար հիմնական ուղղությունները, կանոնակարգել ՀՀ կառավարման բոլոր մարմինների լիարժեք ներգրավումը արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտների հիմնախնդիրների գործընթացում, պլանավորել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության կանխարգելիչ և քաղաքացիական պաշտպանության նախապատրաստման միջոցառումները և պատշաճ մակարդակով կազմակերպել այդ միջոցառումների օպերատիվ արձագանքումը և իրականացումը, բարձրացնել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստվածության աստիճանը:

Պլանով սահմանված են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների (այդ թվում՝ փրկարար ուժերի և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների) նախապատրաստման 2018-ի հիմնական խնդիրները. գիտելիքների, մասնագիտական ունակությունների և հմտությունների կատարելագործում ու կարողությունների զարգացում, ուժեղ երկրաշարժի դեպքում զերտեսչության գործողությունների պլանի ճշգրտում, ազդարարման համակարգի հնարավորությունների ընդլայնում, արտակարգ իրավիճակներում բնակչության վարքագծի կանոնների ուսուցում, նախադպրոցական ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ներդրման աշխատանքներին աջակցություն, մարզի տարածքում հաշվառած հակաճանաչային թաքստոցների և առկա պաշտպանական կառույցների ցանկի ճշգրտում, մարզի բնակչության ազդարարման համակարգի ստեղծում և պատրաստ վիճակի պահպանում, մարզի սահմանամերձ համայնքների բնակչության պատասխանման նպատակով թաքստոցների կառուցման պլանավորում, մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներին ամրագրում, մարզային մակարդակում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում ճգնաժամային կառավարման գործընթացի ձևավորում, փրկարար ուժերի մշտական պատրաստակամության ապահովում, մասնագիտական մակարդակի պահպանում և բարձրացում, կինոլոգիական և պարաշյուտադեսանտային ծառայությունների զարգացում, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների նախապատրաստում, տեսական գիտելիքների բարձրացում և մասնագիտական ունակությունների կատարելագործում և այլն:



2018-ի պլանով նախատեսված է 12 միջոցառում. երկրաշարժի, հակառակորդի հնարավոր հարձակման, զորահավաքի կազմակերպման թեմաներով շտաբային և իրամասնատարաշտաբային ուսումնառությունների անցկացում և այլն: Աշխատանքների արդյունքները կամփոփվեն 2018-ի դեկտեմբերին:

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ

Հայ-վրացական բնագրություններ

Սկիզբը էջ 1

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետևյալ հարցերի շուրջ՝

- միջազգային օգնության տրամադրման դեպքում Հայաստանի և Վրաստանի տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ժամանակ տեղեկատվության փոխանակում,
- նախարարությունների դեկլար կազմի և ճգնաժամային կառավարման կենտրոնների միջև ուղիղ կապի հաստատում,



- սահմանամերձ հենակետերի միջև փոխգործակցության խթանում,
- Վրաստանում INSARAG-ի չափանիշներին համապատասխան որոնողափրկարարական ջոկատի ստեղծման աջակցություն,
- համագործակցություն միջազգային մարդասիրական կազմակերպությունների շրջանակում,
- համատեղ ուսումնառվածությունների անցկացում և հրշեջ-փրկարարական անձնակազմի վերապատրաստում,
- երրորդ երկրին հրշեջ-փրկարարական ուժերի համատեղ օգնության տրամադրում:

Աղբյուր՝ mes.am

ՀՀ ԱՄՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ամփոփել է 2017-ի սեպտեմբերին հանրապետությունում գրանցված արտակարգ դեպքերի ու պատահարների վիճակագրությունը:

Փրկարար ծառայության ստորաբաժանումները սեպտեմբեր ամսին իրականացրել են 2743 ելք, 766-ով ավելի, քան 2016-ի սեպտեմբերին: 1606 կանչով փրկարարներն արձագանքել են արտակարգ դեպքերի, 746՝ կենցաղային կանչ, 93՝ կեղծ ահազանգ, 298՝ այլ դեպքեր: Արտակարգ դեպքերից զոհվել է 29 (այդ թվում՝ 4 կին, 4 երեխա) մարդ, տուժել՝ 1090 մարդ (այդ թվում՝ 240 կին և 130 երեխա): Փրկարարները 37 մարդու կյանք են փրկել (2016 թվականի սեպտեմբերին՝ 13 մարդու): 2016 թվականի սեպտեմբերի համեմատ զոհերի քանակը նվազել է 8-ով, տուժածներինը աճել 276-ով:

Հրդեհ

Գրանցվել է հրդեհների առաջացման վերաբերյալ 1289 ահազանգ (2016 թվականի սեպտեմբերին՝ 809 ահազանգ), որից հրդեհ է գրանցվել 1103 դեպքում (2016 թվականի սեպտեմբերին՝ 687 դեպք): 79 դեպքում գրանցվել է կեղծ ահազանգ, 70-ում՝ հրդեհի բռնկման սպառնալիք և ծխապատ զոտի, 37-ում՝ հսկողությամբ իրականացվող այրումը հրդեհի տեղ են ընդունել և ահազանգել փրկարարներին: Հրդեհներից զոհվել է մեկ, տուժել 8 մարդ (2016 թվականի սեպտեմբերին՝ 0 զոհ, 7 տուժած): Նյութական վնասը՝ 176.96 միլիոն դրամ՝ 138 միլիոնով ավելի, քան 2016-ի սեպտեմբերին: Հրդեհների մեծ մասը՝ 721 դեպք, գրանցվել է բուսածածկ տարածքներում: Սրանից բացի կրակի բաժին են դարձել. աղբ՝ 103, առանձնատուն՝ 85, բնակելի շենք՝ 45, կրպակ, տնակ, ավտոտնակ՝ 37, տրանսպորտային միջոց՝ 22, անասնակեր՝ 9 և այլն: Քաղաքներում գրանցվել է 631 հրդեհ, գյուղերում՝ 472: Նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ աճել է թե քաղաքային, թե գյուղական հրդեհների քանակը: Երևանում գրանցվել է 272 հրդեհ: Մարզերից ամենաշատ հրդեհ գրանցվել է Կոտայքի քաղաքներում և գյուղերում՝ հա-

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԸ



մապատասխանաբար՝ 127 և 130: Ամենաբիշ հրդեհներ եղել են Արագածոտնի, Արմավիրի, Վայոց ձորի քաղաքներում՝ 11-ական և Արմավիրի գյուղերում՝ 10:

մապատասխանաբար՝ 127 և 130: Ամենաբիշ հրդեհներ եղել են Արագածոտնի, Արմավիրի, Վայոց ձորի քաղաքներում՝ 11-ական և Արմավիրի գյուղերում՝ 10:

Ճանադարհատրանսպորտային դատահար՝ 6ՏՊ

2017 թվականի սեպտեմբերին Հայաստանում գրանցվել է 375 6ՏՊ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 47-ով ավելի: 6ՏՊ-ներից զոհվել է 25, տուժել 525 մարդ: 2016 թվականի սեպտեմբերի համեմատ տուժածների թվաքանակն աճել է 76-ով, զոհվածներինը՝ նվազել 7-ով: 6ՏՊ-ների մոտ կեղծ՝ 175 դեպք, բախումներն են, 112 դեպք՝ վրաերթ, 42 դեպք՝ տրանսպորտային միջոցների շրջում, 46 դեպք՝ այլ բնույթի 6ՏՊ:

Փլուզում

Սեպտեմբեր ամսին հանրապետությունում գրանցվել է 9 փլուզում՝ 6-ով կամ երեք անգամ ավելի, քան 2016-ի սեպտեմբերին: Փլուզումների կեսից ավելին՝ 5 դեպք, գրանցվել է մայրաքաղաքում, 1-ական դեպք Արմավիրի, Կոտայքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերում: Փլուզումներից 6-ը տեղի է ունեցել բնակելի շենքերում, շինություններում, 1-ն արտադրական օբյեկտում, 2-ը՝ այլ վայրերում:

Թունավորում

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է 455 թունավորում, զոհվել է 1, տուժել՝ 462 մարդ: 2016 թվականի սեպտեմբերի համեմատ թունավորումների և դրանցից տուժածների թվաքանակներն աճել են, զոհերի թվաքանակը՝ նվազել: Թունավորումների հիմնական պատճառներն են. ալկոհոլ՝ 141 դեպք, քիմիական նյութեր՝ 79 դեպք, դեղորայք՝ 78 դեպք, կարիճի և սարդի խայթոց՝ 49 դեպք, մեղվի խայթոց՝ դեպք, սննդամթերք՝ 25 դեպք և այլն: Թունավորումների մեծ մասը գրանցվել է մայրաքաղաքում՝ 322 դեպք: Մարզերից ամենաշատ թունավորումներ եղել են Արմավիրում՝ 46 դեպք, ամենաբիշը՝ Սյունիքում՝ մեկ դեպք:

Այլ դեպքեր

2017-ի սեպտեմբերին գրանցվել է 3 պայթյուն, կենսաապահովման կոմունալ համակարգերի և մայրուղային խողովակաշարերի 2 վթար, 2 ուժեղ քամի, 2 համաճարակ, զենքի, զինամթերքի հայտնաբերման 2 դեպք, 1 կարկուտ և այլն:

Հրապարակման պատրաստեց Արամ ԶԱՔԱՐՅԱՆԸ



Օգնություն տուժածներին

Կառավարությունն իր պահուստային ֆոնդից 2 մլն 640 հազար դրամ է հատկացրել Արմավիրի մարզի Նորապատ գյուղի Սիլիկյան փողոցի թիվ 9 շենքի հրդեհից տուժած 11 ընտանիքների ժամանակավոր կեցությունն ապահովելու համար: Հրդեհը բռնկվել էր հոկտեմբերի 22-ին, և այն հաջողվեց մարել երեք օր անց: Ամբողջությամբ այրվել է եռահարկ բնակելին, թվով 10 բնակարան գոյքով: Մանրամասները ստորև:

ԱՌԱՆՑ ՉՈՐՍ ՊԱՏԻ

Հրդեհից տուժած արմավիրցիները կորցրել են ամեն ինչ

Հոկտեմբերի 22-ի երեկոյան խոշոր հրդեհ էր բռնկվել Արմավիրի մարզի Նորապատ գյուղում: Բոսնիայի ընթացքում կրակն ընդգրկել էր եռահարկ շենքը: Հրդեհը մեկուսացվել է, տարածման վտանգ չկա, սակայն մարդկանց հայացքներն անորոշ են. 11 ընտանիք՝ առանց տանիքի ու փաստաթղթերի, իսկ առջևում ձմեռ է:



Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հովհաննես Մարգարյանը մանրամասնում է՝ դեպքի վայր հասնելուն պես հայտարարվել է հրդեհի բարդության 3-րդ աստիճան: Օգնության են հասել մարտական հաշվարկներ Բաղրամյանի, Վաղարշապատի, Մասիսի, Արտաշատի և Երևանի ջոկատներից, ինչպես նաև մեկ ավտոսանուղի, թվով՝ 8 մեքենա: Հրդեհաշիջման աշխատանքներին միացել է հերթափոխից ազատ 19 փրկարար: «Շենքը չորրորդ կարգի վթարային էր, փլուզման վտանգ կար: Հնարավոր չէր փողոցային սանուղիքով մոտեցնել: Հրդեհաշիջումը կատարել ենք որոշակի հեռավորությունից՝ ջուրն ուղղորդել տանիքից ներս», - նշում է գնդապետը:

Են փայտյա կառուցատարրերը, որոնք տեղ-տեղ պատված էին մագլուխով: Բաղդադե տանիքի մեծ մասը փլուզված է, որոշ հատվածներում երկաթյա թիթեղներ են կախված:

Քաղաքապետարանն ապահովել է հրշեջ տեխնիկայի ջրամատակարարումը: Դեպքի վայրում հերթապահել են ոստիկանությունն ու շտապօգնությունը:

Հովհաննես Մարգարյանի հաղորդմամբ՝ չնայած անվտանգություն պահպանելու իր հորդորներին, այնուամենայնիվ հերթապահող փրկարարներն ընդառաջել են տուժածների խնդրանքներին և այրվող շենքից դուրս բերել չվնասված գույքը: Նորապատից հստակ տեսքով այս հարցում ամենահաջողակն է. նրան վերադարձրել են սառնարանը,

վագրի մեքենան, սպասքը, հագուստը և այլն: Անկողնային պարագաները: Մեկ այլ տիկնոջ հանձնվել է իր ոսկեդեղնը: «Քոլոր ջոկատները, վտանգելով իրենց, հերոսական աշխատանք կատարեցին: Ներկա դրությամբ դեռ 3 ծխացող օջախ կա, իրականացվում է հերթապահություն: Ըստ իս հարցի միակ լուծումը սեփականատիրոջ համաձայնությամբ շենքի հարկադիր փլուզումն է», - հավելում է վարչության պետը:

Հոգեբանական աջակցության բաժնի հրահանգիչ, փ/ծ ավագ լեյտենանտ Մերի Գևորգյանն ի սկզբանե դեպքի վայրում է եղել, անհատական գրույցներ ունեցել բոլոր տուժածների հետ: «Մարդիկ խուճապահար էին, զարմացած: Մեծահասակները սրտնեղում էին, որ դժվար ապրուստով

իրենց վաստակածից ոչինչ չի մնացել: Նրանց շարքում վարձու բանվորներ կան: Տուժողներից մեկը հուսահատությունից նույնիսկ սպառնում էր իրեն կրակի մեջ նետել: Նման մարդկանց համար իսկական աղետ է չորս պատր կորցնելը», - ասում է Մերին:

Հարցի առնչությամբ հոկտեմբերի 23-ին Արմավիր համայնքում գումարվել է ավագանու արտահերթ նիստ, որոշում է կայացվել փողոցում հայտնված քաղաքացիներին ցուցաբերել դրամական աջակցություն մեկ շնչի դիմաց 60 հազար դրամի չափով: Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Սարգիս Մովսիսյանի խոսքով՝ գումարը նախատեսված է առաջին անհրաժեշտության կարիքները հոգալու համար. «Մինչ կառավարության կողմից

բնակարանի հարցը լուծելը ժամանակավոր կացության մի քանի տեղ ենք առաջարկել, ինչպես, օրինակ, տեղի մարզադպրոցը՝ ապահովված սանհանգույցով, տաք և սառը ջրով:

Դիմել ենք նաև հանրությանը, ներկայումս ճշտում ենք աջակցության ձևաչափը: Մարզպետարանը խոստացել է տաք հագուստ տրամադրել»:

Նշենք, որ տուժածները իրաժարվել են ժամանակավոր կացարան տեղափոխվելու առաջարկից՝ գիշերելով հարազատների տանը: Նրանք լիահույս են, որ մի առավոտ բարի լուր կլսեն: ■

ԱՆԻ ԱՆՏՈՆՅԱՆ
Լուսանկարները՝
Հովհաննես ՀՈՎՀԱՎԱԿՅԱՆԻ,
Արմավիր

Շենքերի սեյսմազիցման արժեքները Հայաստանի համար շարունակում է մնալ խիստ այժմեական և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիր: Վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանում կառուցված տիպային 5 հարկանի քարե և 9 հարկանի կարկասապանելային բնակելի շենքերի սեյսմազիցման արժեքները զգալիորեն ցածր է տարածաշրջանի սեյսմիկ վտանգի մակարդակից: Սրանով է պայմանավորված Երևանի և հանրապետության այլ խոշոր բնակավայրերի սեյսմիկ ռիսկի բարձր մակարդակը:

1988 թվականի Սպիտակի երկրաշարժի գոտում վերականգնողական աշխատանքների վերլուծությունը ցույց տվեց, որ ավանդական մեթոդներով շենքերի ուժեղացումը միշտ չէ, որ տնտեսապես արդյունավետ է: Այսօր արդեն Հայաստանում սեյսմազիցման շենքեր ու կառուցվածքներն նախագծելիս և եղած շենքերն ուժեղացնելիս կիրառվում են ժամանակակից մեթոդներ, որոնք սահմանված են ընդունված շինարարական նորմերով: Այս համակարգերից են տատանումների դինամիկական մարիչները, միացվող և անջատվող կապերը, մարումը բարձրացնող կոնստրուկցիաները, ռետինամետաղե շերտավոր հենարանների կիրառմամբ սեյսմամեկուսացումը, գոյություն ունեցող կառուցվածքի միացումը նորակառույց կոշտ կցակառույցի հետ:

Սեյսմապաշտպանության նշված մեթոդներից յուրաքանչյուրը թույլ է

ԻՄ ՏՈՒՆՆ՝ ԻՄ ԱՄՐՈՅԸ

Շենքերի սեյսմազիցման արժեքները հաջողված փորձեր


տալիս 2-3 անգամ նվազեցնել կառուցվածքի սեյսմիկ հակազդեցությունը, ինչի արդյունքում նախագծումը կարելի է իրականացնել 1 բալով ցածր սեյսմազիցման արժեքով: Սեյսմապաշտպանության յուրաքանչյուր համակարգ ունի կիրառման որոշակի առանձնահատկություն, որը պայմանավորված է շենքի կոնստրուկտիվ լուծումներով, հարկայնությամբ և հավանական երկրաշարժերի բնութագրերով:

Անդրադարձանք նշված մեթոդներից երկուսին:

Վերին ճկուն հարկ

Սկսած 1985 թվականից մինչև 1988-ի երկրաշարժը «Հայնարտ-Շին» ինստիտուտում կատարվել են «Վերին ճկուն հարկի» առաջին փորձարարական աշխատանքները: Այս եղանակը մոդելավորվել է, և իրականացվել են փորձարկումներ: Վերին լրացուցիչ ճկուն հարկը դառնում է դինամիկական մարիչ և մոտ երկու անգամ փոքրացնում սեյսմիկ բեռնվածքները: Այս եղանակով շենքի սեյսմազիցման արժեքները բարձրացումը նպատակահարմար է տեխնիկատնտեսական տեսանկյունից:

Բազմահարկ շենքերի սեյսմազիցման արժեքներն «Վերին ճկուն հարկ» եղանակը միջազգային ТЕРАРМ-90 մրցույթում



Երևան, Ամիրյան 18, Վերին ճկուն հարկ՝ տեղափոխվող վերնածածկով

մրցանակ է շահել: Այս եղանակը կիրառվել է Հայաստանի Երևան, Վանաձոր և Արցախի Շուշի քաղաքներում: Մեթոդի առավելությունն այն է, որ կարելի է կիրառել ոչ բավարար սեյսմազիցման ունեցող շենքերի վրա՝ առանց բնակիչների տարահանման: Շենքի վրա ավելացվում է մեկ լրացուցիչ հարկ: Հայտնի է, որ հարթ տանիքներով բարձրահարկ շենքերի տանիքներն անմիջապես վիճակում են: ճկուն լրացուցիչ հարկի ավելացումը լուծում է նաև այս խնդիրը: Սա մեծ ֆինանսական միջոցներ չպահանջող եղանակ է: Այսօր «Վերին ճկուն հարկ» մեթոդի փորձարարական աշխատանքները շարունակվում են ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայության կառուցվածքների սեյսմազիցման նպատակով:


Շենք-հարկաշար

Այս համակարգը տարբերվում է ակտիվ սեյսմապաշտպանության համակարգերից, քանի որ սեյսմապաշտպանությունն իրականացվում է ոչ թե տատանումների մարմնների ուժեղացմամբ, այլ՝ իներցիոն բեռնվածության զգալի մասի փոխանցմամբ շենքից դուրս տեղադրված կոշտ համակարգին: Այս մեթոդով ուժեղացվել են

Սպիտակի երկրաշարժից վնասված Գյումրի քաղաքի 5 հարկանի քարե շենքեր: Սեյսմազիցման արժեքները զգալիորեն ցածր է տարածաշրջանի սեյսմիկ վտանգի մակարդակից: Համակարգի վրա ազդող ուժերի մեծ մասն ընդունում է հարկաշարը, որի կոշտությունն այնպիսին է, որ նրա տատանման հաճախականությունը մեծ է շենքի տատանման հաճախականությունից:

«Շենք-հարկաշար» մեթոդը ոչ միայն բարձրացնում է շենքի սեյսմազիցման արժեքները, այլև մեծացնում օգտագործելի տարածությունը: Կախված շենքի տեսակից կարելի է հարկաշարի և շենքի կապերի համար օգտագործել տարբեր ճկունություն ունեցող ամրանային ծողեր: Նման ձևով շենքերի սեյսմազիցման արժեքները բարձրացնում են հաջող փորձ կա Գյումրի քաղաքում: «Շենք-հարկաշար» մեթոդի փորձարարական աշխատանքները շարունակվում են: ■

Հրապարակումը պատրաստվել է ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայության կառուցվածքների սեյսմազիցման կենտրոնի պետ Զավեն Խաչատրյանի «Իմ տուն» իմ ամրոցը» հոդվածի հիման վրա:




Կաղանուծ

Պլաստիկ թափոնների հետագա ճակատագիրը լուծելու համար Կապանում նախաձեռնել են պլաստիկ իրերի վերամշակմամբ նոր արտադրություն հիմնել: Կապանում կգործի արտադրամաս, որտեղ պլաստիկ թափոններից առնվազն 6 տեսակի շինարարական նյութեր են արտադրվելու: փողոցի եզրաքարեր, սալիկներ, կղմինդր, դիտահորերի կափարիչներ և այլն:

ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կաղանուծ տվաստիկ իրերի վերամշակմամբ շինանյութեր կարտադրվեն



Արտադրանքի մոտ 25-30 տոկոսը կկազմի պլաստիկը, իսկ 70 տոկոսը՝ ավազը: Կարևորն այն է, որ արտադրության ժամանակ այրման պրոցես չի ընթանալու, թունավոր գազեր չեն արտանետվելու, պլաստիկի տարանջատման շնորհիվ աղբամանները գերծանրաբեռնված չեն լինելու,- մեզ հետ զրույցում նշեց «Բնապահպանական մարտահրավերների վերածուծը հնարավորությունների պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում» ծրագրի ղեկավար Նորայր Գրիգորյանը:

Գորիս, Մեղրի քաղաքներին: Տեղերում պլաստիկ թափոնները կհավաքվեն, կմանվեն և բեռնատարներով կտեղափոխվեն Կապան, որտեղ էլ կընթանա արտադրական պրոցեսը:

«Այս նախաձեռնությանը առաջին անգամ Հայաստանում պլաստիկ աղբը տարանջատվելու, հավաքվելու և վերամշակվելու է վերածվելու ցեմենտի փոխարինիչի: Կապանում ստեղծվելիք արտադրամասում հոսքագծով վերամշակված պլաստիկ թափոնը, որոշակի արտադրական գործարկից անցնելով և խառնվելով ավազի հետ, կվերածվի տարբեր շինանյութերի:

«2014-ին «Ուրբան» հիմնադրամը աղբարկղեր և մանիչ էր տրամադրել Կապանին, պլաստիկից բավականին մեծ պաշար ունեինք հավաքած. որոշեցինք հունքը վաճառելու փոխարեն տեղում արտադրություն հիմնել, ինչպես եվրոպական մի շարք երկրներ են անում: Կաշխատենք 15 հարակից ձեռնարկությունների հետ, 35 նոր աշխատատեղ կստեղծվի, բացի դրանից բնապահպանական մեծ խնդիր կլուծենք՝ Սյունիքի և Վայոց ձորի մարզերը կազատվեն պլաստիկ թափոններից: Որքանով տեղյակ ենք, մեր տարածաշրջանում նման արտադրություն չկա,

պլաստիկի վերամշակմամբ զբաղվում են, բայց արտադրատեսակներ չեն ստեղծում»: Սկզբնական շրջանում արտադրությունը կիրացվի ներքին շուկայում՝ համայնքներում փողոցների, մայրթերերի նորոգման, սալիկներով երեսպատման, տանիքի ծածկերի վերանորոգման և այլ աշխատանքների համար, հետագայում արդեն մտադիր են քայլեր ձեռնարկել արտադրանքը ներկայացնելու միջազգային շուկայում: Նորայր Գրիգորյանը նշում է, որ ապագայում մտադիր են ընդլայնել արտադրատեսակները: Ծրագրով նախատեսվում է նաև արտադրանքից հանգստյան գոտիներում տաղավարներ կառուցել:

Ծրագրի տևողությունը 2 տարի է, որի իրագործման վերջնական փուլում նախատեսվում է քաղաքապետարանի ենթակայությանը հիմնարկ ստեղծել, որը կշարունակի զբաղվել արտադրամասի հետագա շահագործմամբ, արտադրանքի վաճառքով և այլն:

Այս արտադրության հիմնման ուղղությամբ ակտիվ աշխատանքներ են տարվում, հոսքագիծը ձեռք կբերվի մինչև 2017-ի դեկտեմբերը, իսկ արտադրությունը կմեկնարկի եկող տարվա սեպտեմբերին, մինչև 2018-ի տարեվերջ էլ նախատեսվում է տալ առաջին արտադրանքը: Ծրագրի պատասխանատուները հայաստանյան շուկան ուսումնասիրելով պարզել են, որ, բացի տանիքի ծածկից, իսկ մեր երկրում ընդունված են մետաղական ծածկերը, Կապանի գործարանի արտադրանքն ավելի էժան կլինի, որակապես գերազանցող: Եզրաքարերը, սալիկները թեթև են, ամուր, ցրտադիմացկուն և ջերմադիմացկուն են՝ մինչև -60 և +60 աստիճանի պայմաններում, կարող են ծառայել մոտ 70 տարի:

Ծրագիրը իրականացվում է Եվրամիության տարածքային զարգացման պիլոտային ծրագրի շրջանակներում: Ընդհանուր բյուջեն կազմում է մոտ 750 հազար եվրո, որից 510 հազարը ֆինանսավորում է Եվրամիությունը, 25 տոկոսի չափով ՀՀ կառավարությունը, համաֆինանսավորմամբ հանդես են գալիս նաև Կապանի քաղաքապետարանը, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը, «Հայ-կոնսալտ» խորհրդատվական հիմնադրամը և այլ կազմակերպություններ:

Ստերի ՍՈՐՈՍՆՅԱՆ

Դժբախտ դատահար Ախթալայի հանքում



Հոկտեմբերի 23-ին, ժամը 10:03-ին, փլուզում է տեղի ունեցավ Լոռու մարզի «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ընկերության Շամլուղ տեղամասի ստորգետնյա հանքի 140 հորիզոնի 22-րդ երակում: Փլուզման հետևանքով զոհվել է հանքի 38-ամյա աշխատակից Վրեժ Սահակյանը:

Կան մի քանի մետր փորելով առաջ են գնում, թուլացած ապարները հնարավոր չէ ամեն պահ արձանագրել, զգուշանալ,- նշեց Ախթալայի ջրկատի հրամանատար Արշալույս Սիմոնյանը և տեղեկացրեց, որ հանքափորի վրա ընկած քարը չափերով այնքան մեծ էր, որ ձեռքով հնարավոր չէր հեռացնել:

Վրեժ Սահակյանի հետ փլուզված հանքափորում հորատման աշխատանքներ էին կատարում ևս երկու աշխատակից, բարեբախտաբար, նրանք չեն վնասվել:

Նշենք, որ հանքում զոհված Վրեժ Սահակյանն ապրում էր Ախթալայում, կոմբինատում աշխատում էր երկար տարիներ, երեք անչափահաս երեխաների հայր էր: Ընտանիքով ապրում էր ծնողների հետ և տան միակ եկամուտ ապահովողն էր:

Առավոտյան ժամը 10:10-ին փլուզման վերաբերյալ ահազանգ ստանալուց հետո դեպքի վայր է մեկնել ԱԲՆ Հատուկ լեռնափրկարար ծառայության Ախթալայի ջրկատը:

Սա 2017-ին լեռնահարստացման կոմբինատի հանքում գրանցված մահացու ելքով առաջին դժբախտ պատահարն էր: Այս տարվա ապրիլի 17-ին Շամլուղի փակ հանքում փլուզված ապարների տակ էր մնացել 41-ամյա Աղբալ Առաքելյանը և մարմնական վնասվածքներով տեղափոխվել Ալավերդու բուժկենտրոն, որտեղից ժամեր անց երևանի «Էրեբունի» բուժկենտրոն:

«Բոպեններ անց դեպքի վայրում էին: Հանքափորի դին ընկերներն արդեն դուրս էին բերել հանքի մուտքի մոտ, որեցինք պատգարակի վրա և տեղափոխեցինք շտապօգնության մեքենա: Փլուզման վայրում ջրկատի հրամանատար Արտակ Ասլանյանի, վարորդ, շնչադիմակավոր Համլետ Դալլաբյանի հետ ամրացման աշխատանքներ ենք իրականացրել՝ հետագա փլուզումներից խուսափելու համար: Մենք պարբերաբար ըստ գրաֆիկի, շրջայց ենք կատարում հանքում, վերացնում վտանգավոր հատվածները, մաքրում և ամրակայանք աշխատանքներ իրականացնում: Փլուզումը, հնարավոր է, աննկատ ճաքից առաջացած լինի: Հանքափորներն օրա-

Արտադրական վտանգավոր օբյեկտների քանակն աճել է



Այս տարվա հուլիսին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հավատարմագրման և լիցենզավորման գործակալությունում գրանցված էր 18 429 արտադրական վտանգավոր օբյեկտ՝ ԱՎՕ, հոկտեմբերին 18 602 ԱՎՕ: ԱՎՕ-ների քանակն աճել է մոտ 1 տոկոսով: Անցած տարվա հոկտեմբերին Հայաստանում գրանցված էր մոտ 18 000 ԱՎՕ:

Վտանգավոր օբյեկտները, քիմիական անալիզի լաբորատորիաները, պոչապարները, ջրամբարները, վերելակները, կարուսելները:

Գրանցված ԱՎՕ-ների մեջ կան չափատող և գործունեությունը դադարեցրած, սառեցված օբյեկտներ: Ծինարարական կամ որոշ ավտոկոնցուկներ էլ հին են և դարձել են մետաղի ջարդոն: Արտադրական վտանգավոր օբյեկտների մոտ 70 տոկոսը վերելակներն են: Բազմաթիվ ընկերություններում կա մեկից ավելի ԱՎՕ. «Չանգեզուրի պլանմանուֆակտուրային կոմբինատ» ավելի քան 200, «Երևան ԶԷԿ» ավելի քան 20, «Երևան գարեջուր» ավելի քան 10 և այլն:

Մ.Ա.



Օդակի հրամանատարը

Գործին նվիրված փրկարար է: Աշխատանքները կազմակերպելիս միշտ անհատական մոտեցում է ցուցաբերում, գիտի որտեղից սկսի գործը, որ կարողանա հաղթահարել իր առջև դրված խնդիրը: Անմիջական է, ուշադիր բոլորի համոզեալ, դժվարին իրավիճակներում էլ գործընկերոջ պարտականությունն իր ուսերին է վերցնում: Եթե Վաղիկը դեպքի վայր մեկնած խմբի հետ է, գիտենք՝ գործը չի ծախսվում:

ՎԱՂԱՐԸԱԿ ՄԻՄՈՆՅԱՆ. ԿԱՏԱԿԱՍԵՐ, ԳՈՐԾԻ ՄԵՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՐԿԱՐԱՐԸ

Վաղարշակ Միմոնյանը կամ ինչպես մտերիմներն ու գործընկերներն են դիմում Վաղիկը, Գավառի հրշեջ-փրկարարական ջոկատի ամենաերկար ծառայողական ուղի անցած փրկարարն է: 2001-ին է ուտը դրել ոլորտ, իսկ մինչ այդ ծառայել բանակում՝ Վայոց ձորի մարզի Նախիջևանի սահմանագծում: «1997-1999 թվականներն էին, բանակը նոր-նոր էր կազմավորվել, դիրքերում դեռ կրակոցները չէին դադարել: Առաջնագծում ծառայելով՝ շատ բան եմ սովորել, կոփվել, ինչը շատ է օգնել փրկարարական աշխատանքներում», - ասում է օդակի հրամանատար, փ/ծ ավագը: Առաջին աշխատավայրը Գավառի հրշեջ-մասն է եղել, որտեղ ժամանակին արձագանքում էր միայն հրդեհների վերաբերյալ ստացվող կանչերին: Առաջին կանչը Նորատուս գյուղից էր, որտեղ խոշոր հրդեհ էր բռնկվել: այրվում էր տունը, ավտոտանակն ու խանութը: Գիշում է, թե ինչ մեծ դժվարությամբ ու երկարատև հրդեհաշիջման արդյունքում ի վերջո հաջողվեց մարել կրակը:



Գարյունավոր կանչներն ուրվագծում են երկարամյա փրկարարի անցած դժվարին ու կարևոր ուղին: Այս տարիների ընթացքում բազմաթիվ ահազանգերի է արձագանքել. հրդեհների մարումից, կենցաղային տարատեսակ կանչերից մինչև ծյան մեջ արգելափակված մեքենաների դուրսբերում:

Տարիների կուտակած փորձն այժմ բանեցնում է կրտսեր գործընկերներին մասնագիտացնելու հարցում: «Առաջին խորհուրդը, որ տալիս եմ նորեկներին, «դուխով» գործին կանչելն է, եթե վախեցան, գործը գլուխ չեն բերի»: Գործընկերները պատմում են, թե ինչ տեսակ մեքենաների ասես չի դիմել, իրենց սրտից վախը համելու ու խիզախություն են ցուցնելու համար: «Իրեն հարազատ հումորով, նույնիսկ «դաժան» կատակներով մեզ սովորեցրել է, որ դեպքի վայրում անելանելի վիճակում չհայտնվելու համար փրկարարը պետք է սառնասիրտ լինի», - պատմում են ջոկատի տղաներն ու ընդգծում, որ Վաղիկի աշխատանքային առօրյայից ոչ միայն հումորը, այլև զվարճալի դեպքերն անպակաս են եղել: «Մի օր մեզ պատահաբար կողպեց բեռնարկի մեջ և միայն 4 ժամ հետո կարողացանք ազատվել, երբ հրամանատարը եկավ ու

տեսավ, որ խումբը չկա», - ծիծաղում են Գավառի ԴՓՁ-ի տղաները: Կատակասեր, գործի մեջ պատասխանատու լավագույն փրկարարն իր աշխատանքի մասին շատ խոսել չի սիրում, ասում է՝ մարդկանց նեղությանը հասնելն ու ձեռք մեկնելն իր ամենօրյա գործն է:

Նա հասնում է այնտեղ, որտեղ իր օգնության կարիքը կա՝ ինչպես Գեղարքունիքում, այնպես էլ մարզի սահմաններից դուրս: 2011-ին շատ փրկարարների հետ օրեր շարունակ մասնակցել է Այրումի սողանքի ժամանակ տարվող որոնող-հավաքարարական աշխատանքներին, բախերով հողի հաստ շերտը փորելով՝ գտել անհետ կորածներին՝ միաժամանակ պահպան աչքը չկտրելով սողանքի վայրում աշխատող իր ջոկատի տղաներից: Փ/ծ ավագը մեծ աշխատանք է տարել նաև 2007-ին, երբ Գեղարքունիքի մարզում ծյան հալոցքից ու առատ տեղումներից Գավառագետն ու սնուցող վտակները հեղեղել էին ավանները տներն ու հողատարածքները: Վաղիկն իր գործընկերների հետ տևական ժամանակ առանց հանգստանալու լծվել էր մարդկանց տարահանելու, տան ու

մեցվածքը, կենդանիները ջրից դուրս բերելու և ապահով վայր տեղափոխելու պատասխանատու գործին:

«Գործին նվիրված փրկարար է: Աշխատանքները կազմակերպելիս միշտ անհատական մոտեցում է ցուցաբերում, գիտի որտեղից սկսի գործը, որ կարողանա հաղթահարել իր առջև դրված խնդիրը: Անմիջական է, ուշադիր բոլորի համոզեալ, դժվարին իրավիճակներում էլ գործընկերոջ պարտականությունն իր ուսերին է վերցնում: Եթե Վաղիկը դեպքի վայր մեկնած խմբի հետ է, գիտենք՝ գործը չի ծախսվում: Նրա համար հանգստյան օր գոյություն չունի, երբ զանգում ենք, վայրկենապես կանգնում է մեր կողքին: Տոկատի տղաները՝ հանձնի Վաղիկի առանց տրտնջալու ու նվիրվածությամբ են աշխատում, ինչը շատ կարևոր է», - Գավառի ԴՓՁ-ի օդակի հրամանատարին օրինակելի աշխատող է համարում Գեղարքունիքի մարզի փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Գարեգին Զակարյանը:

Առջևում ծնեռ է, իսկ այդ սեզոնին Գավառում հրշեջ-փրկարարները հիմնականում արձագանքում են

ծյան ու ծնաբքի հետևանքով ճանապարհներին արգելափակված մեքենաների ու մարդկանց դուրսբերման կանչերին: 2015-ի սաստիկ ձմեռը լավ է պահպանվել նրանց հիշողության մեջ: «Օրերով տուն չէինք գնում, ծյան շերտը տեղ-տեղ 1-2 մ էր, ծնաբքից ճանապարհային նշանները ծյան տակ էին մնացել: Նոր տարվա օրերն էին, բոլորը շտապում էին բարեկամներին շնորհավորելու, 100-ից ավելի մեքենաներ խցանվել էին Գավառ-Մարտունի ավտոճանապարհին: Մարդկանց տեղափոխում էինք վրանային հենակետեր, ուտելիք, տաք թեյ հյուրասիրում, նույնիսկ ոմանց մեր տուն հյուր են տարել: «Ուրախ» ամենագնացով հեռավոր գյուղերից ենք հոյի ու հիվանդ մարդկանց հիվանդանոց հասցրել», - պատմում է Վաղարշակ Միմոնյանը:

Ծառայության տարիներին մարդկանցից բազմիցս է շնորհակալական խոսքեր լսել, մարզային և համայնքային իշխանությունների կողմից շնորհակալագրեր ու պատվոգրեր ստացել, Արևմտյանի ու ներկա մասի փրկարար հոր, այլև զինվորականի համագրեցությունը:

Ծառայողական պարտականությունները բարեխիղճ կատարելու համար արժանացել «10 տարի անբասիր ծառայության համար» հուշամեդալի, շնորհակալագրի և այլն: Անկեղծանում է՝ ոգեշնչվում է, երբ իրեն գնահատված է զգում: Նրա ամեն մի հաջողությամբ հպարտանում են նաև ընտանիքի անդամները: 16 տարի առաջ է ամուսնացել, կինը՝ Արևը, նույնպես Գավառի Արժավաբար թաղամասից է: Դեռ դպրոցական տարիներից են իրար հավանել, ավարտելուց հետո ամուսնացել, այժմ երկու երեխա ունեն 15-ամյա Անին և 12-ամյա Վովան, որը պատանի երկրպագու է և սիրում է ոչ միայն փրկարար հոր, այլև զինվորականի համագրեցությունը:

Վաղարշակն ընտանիքի միակ փրկարարը չէ, նրա ավագ եղբայրը՝ Արմենը, նույնպես փրկարար ծառայության աշխատակից է: Մի քանի տարի հետո Գավառի ԴՓՁ-ի օդակի հրամանատար, փ/ծ ավագ Վաղիկը կանցնի վաստակած հանգստի, թեև այդ մտքի հետ ոչ ինքը, ոչ էլ ջոկատի անձնակազմն է ուզում հաշտվել: ■

Մերի ՍՈՐՈՍՈՆՅԱՆ

ՀՀ Կոտայքի մարզի Գետարգել գյուղում գտնվող հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը համարվել է նոր սարքավորումներով՝ հատուկ նշանակության լուսային 30 աշտարակ, 8 ամենագնաց-կվադրոցիկ:

Բենզինային շարժիչով գեներատորների օգնությամբ աշխատող լուսային աշտարակը նախատեսված է արտակարգ իրավիճակների արձագանքման ժամանակ բաց տարածքներում լուսավորություն ապահովելու համար: Գրանք կարող են օգտակար լինել նաև փրկարարների տեղակայման կամ դաշտային պայմաններում ծավալված բժշկական ճամբարներում լուսավորությունն ապահովելու համար: Անձնագնաց-կվադրոցիկները

ՀԱՄԱԼՐՎՈՒՄ Ե ԳԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԶԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

ը կօգտագործվեն արտակարգ իրավիճակների դեպքում դժվարմատչելի վայրերում, արտաճանապարհային, որոնողական, հետախուզական ու փրկարարական աշխատանքներում:

Նշված փրկարարական գույքը կհանձնվի ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տարբեր ստորաբաժանումների՝ արտակարգ իրավիճակներում արձագանքման արդյունավետության բարձրացման նպատակով:

Հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնը բացվել է 2016-ի մար-



Աղբյուր՝ mes.am



Արտակարգ ժամանակներ

Հայաստանը բոլորի ու յուրաքանչյուրի հայրենիքն է, այն մեր հայրենիքների մախահայրենիքն է: Մենք բոլորս, ֆրանսիացիներ, անգլիացիներ, գերմանացիներ և իտալացիներ՝ երազում ենք տեսնել լեռնային Ասիայում դեպի Կովկաս նայող երանելի երկիրը՝ օրրանը մեր նախնիների:

ԺԱՆ ԺԱԿ ԷԼԻՋԵ ՌԵՎԼՅՈՒ Ֆրանսիացի աշխարհագրագետ, պատմաբան, սոցիոլոգ

ԲԵՄՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՍԱՆԵՐՆ ԵՆ

Միջոցառում՝ նվիրված Կարեն Դեմիրճյանի 85-ամյակին

Հոկտեմբերի 25-ին ԽՆԿ-Ապր անվան մանկական գրադարանում նշվեց քաղաքական և պետական ակադեմիկոս գործիչ, ազգային հերոս Կարեն Դեմիրճյանի ծննդյան 85-ամյակը: Գրադարանի տնօրեն Ռուզաննա Տոնոյանը պարզաբանեց, որ այս վերաբերմունքը երախտագիտության զգացում է՝ ուղղված մեծ հայորդու հիշատակին: «Գրադարանի այս շենքը կառուցվել է Կարեն Դեմիրճյանի նախաձեռնությամբ և շահագործման է հանձնվել 1980 թվականին»:



Սիջոցառումը բեմականացնում էին ակադեմիայի սաները: «Քանի որ մեր ակադեմիան համագործակցում է գրադարանի հետ, ուստի տնօրենը մեզ հրավիրեց համատեղ իրականացնելու հանդիսությունը: Սա նաև հնարավորություն է, որ նոր սերունդը մոտիկից ճանաչի գիտակցի Կարեն Դեմիրճյանի մեծությունը, հաղորդակից լինի նրան և նրա ստեղծած արժեքներին, դրանց խորհրդին, որոնք այսօր էլ ուղեկցում են մեզ»,- նշեց միջոցառման բեմական սցենարի հեղինակ, ակադեմիայի մշակութային գծով պրոռեկտոր, փ/ծ գնդապետ Կարինե Ոսկանյանը:



գործչին նվիրված ֆիլմի ցուցադրմանը ու նրան ներկայացնող լուսանկարներով, նաև պարային ներկայացումներով, որոնք ներկայաներին տեղափոխում էին Դեմիրճյան անհատի դրոշմած միջավայր: «Մենք սցենարն այնպես ենք կառուցել, որպեսզի հանդիսատեսին փոխանցենք այն մթնոլորտը, որը հագեցած կլինի Կարեն Դեմիրճյանի ներկայությամբ ու ստեղծած ավանդույթներով»,- շարունակում է ներկայացնել Կարինե Ոսկանյանը: Միջոցառման ավարտին ազգային հերոսի այրին՝ տիկին Ռիմա Դեմիրճյանը, չկարողանալով թաքցնել անկեղծ հուզմունքը, նշեց, որ ամուսինը ԽՆԿ-Ապր անվան գրադարանի ընթերցողներից է եղել իր պատանության տարիներին, մշտապես գիրքն ու մշակույթը

կարևորող և այդ բարձր գիտակցությամբ առաջնորդող անհատ ու գործիչ: «Կարեն Դեմիրճյանը երկիր ռազմավարական կարևորություն էր համարում ոչ միայն տնտեսությունը, նաև մշակույթը, գիտությունն ու արվեստը և ասում, որ այդ արժեքներով պետք է ներկայանանք աշխարհին»: Խոսքն ավարտելով՝ տիկին Դեմիրճյանը գրադարանին հանձնեց «Կարեն Դեմիրճյան հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի կողմից շնորհված «Կարեն Դեմիրճյան» հուշանշանը, որ թողարկվել է մեծ գործչի ծննդյան 85-ամյակի առիթով:

Ֆելիքս ԵՂԻԱՋԱՐՅԱՆ Լուսանկարները Կահրամ ԱՎՈՅԱՆԻ

Ուսանողները սեղմ ժամանակում կարողացան ամբողջական և բովանդակալից ներկայացնել մեծ գործչի կյանքն ու գործունեությունը:

ըն, անցած ճանապարհի կարևորագույն հանգույցները: Երգերն ու երաժշտական համարներն ընտրված էին 1980-ականների ցանկից

այդպես ստեղծելով դեմիրճյանական ժամանակաշրջանի տրամադրություն ու գունապակ: Բեմական համարներն ընդմիջվում էին մեծ

Հոկտեմբերի 2-ին Թուրքիայի ծովափնյա Բողոնում քաղաքում կայացած Little Princess & Little Prince World 2017 մանկական գեղեցկության մրցույթում հաղթող է ճանաչվել 4-ամյա երևանցի Երիկ Կիտեսովը:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳՈՒԹՅՈՒՆ ԶԻ ՃԱՆԱԶՈՒՄ



Փոքրիկը մանկապարտեզի սան է, սիրում է պար և ծիսավարություն: Սա իր առաջին հաղթանակը չէր: Մոր Կարինեի խոսքով՝ Երիկն առաջատար է եղել նաև տեղական Mister Ajapnyak և Mister Armenia մրցույթներում, ինչից հետո «Համաշխարհային գեղեցկության և նորածնության լիգայի» միջազգային կազմակերպիչի նախագահ Աշոտ Խաչատրյանի առաջարկով որոշել են մասնակցել նաև միջազգային մրցույթին՝ միաժամանակ համատեղելով ընտանեկան հանգիստը:

տալիս մյուսներին: Երեխաների մեջ հաստատվել է իսկական ընկերությունը: Մանկական գեղեցկության մրցույթ կազմակերպելու գաղափարը մասնագիտությամբ իրավաբան և հոգեբան Աշոտ Խաչատրյանը կյանքի է կոչել 1990-ականներին նպատակ ունենալով աշխարհին ցույց տալ երեխաների ֆիզիկական և հոգևոր դաստիարակության կարևորությունը: Ի սկզբանե խիստ էին մրցույթի մասնակցության պայմանները. երեխաներին արգելվում է օգտագործել կոսմետիկա, ներկայանալ ոչ մանկական հագուստով և մեծահասակի սանրվածքով: Տարբեր խորագրերով մրցույթներ անցկացվել են Անգլիայում, Իսպանիայում, Բուլղարիայում, Թուրքիայում, Ռուսաստանում և այլուր: «2008-ին Հայաստանում կազմակերպեցի 18-27 տարիքային խմբի գեղեցկության փառատոն, որին մասնակցում էին 20 երկրների ներկայացուցիչներ: Փառատոնը երեք տարի շարունակվեց: Մարդիկ սկսեցին կրկնօրինակել մրցույթները՝ խախտելով մեր հեղինակային իրավունքը, ինչը մի քանի դատական գործընթացի տեղիք տվեց: 27 տարի ես ատամներով պահում եմ այս ամենը՝ սեփական երեխայիս պես: «Միսս 7 մայրցամաք», «Տիեզերքի արքայադուստր», «Աշխարհի ֆոտոմոդել», «Տիեզերքի ֆոտոմոդել» մրցույթները բոլորը հայկական ծագում ունեն»,- նշեց կազմակերպիչը:

Այս տարիների ընթացքում ծրագիրը փոփոխություններ կրել է: Ավելացել է Tv Star Universe մրցույթը, որն ուղղված է ազգային մշակույթի և սովորույթների ներկայացմանը, Missis Mum of the World մրցույթը, որի մասնակիցները մայրիկներն են: Առանձին մրցույթ կա նոր տաղանդներ բացահայտելու նպատակով: Հայտագրում անվճար է բոլոր ծախսերը հոգում է մասնակիցը: Ոչ ոք առանց դիպլոմի և պրոֆեսիոնալ լուսանկարների տուն չի գնում: Մրցույթները նաև բարեգործական բնույթի են: Ստացված եկամուտը հնարավորության չափով ուղղվում է մանկատներին և ծերանոցներին: Հիմնադրամը նմանատիպ մի ակցիա անցկացրել

է նաև Իսպանիայի Պալմա դե Մայորկա քաղաքի քաղցկեղով հիվանդ երեխաների համար: Խոսելով վերջերս Բողոնում անցկացված մանկական գեղեցկության մրցույթի մասին՝ Աշոտ Խաչատրյանը հավելեց, որ թե՛ երաժշտական, թե՛ բեմական ձևավորման մեջ գերակշռել են հայկական նոտաները: 3000-հոգանոց դահլիճը լեցուն է եղել Ռուսաստանից և Բուլղարիայից ժամանած հայերով: «Սա միջազգային ընտանիք է, մենք քաղաքական խնդիրներ չենք տեսնում: Նախորդ տարի մեր հայուհու հաղթանակից հետո թուրք համդիսատեսը հիացմունքով գոչում էր «Էրմենիստան»:

Հարցին արդյոք լինելով հայ և ժյուրիի անդամ կողմնակալ վերաբերմունք չունի իր հայրենակիցների նկատմամբ, հիմնադիրը պատասխանեց, որ մրցույթը հիմնված է բացառապես անկեղծության և անաչառության սկզբունքի վրա: Երիկի դեպքում մեծ դեր է խաղացել բեմում անկաշկանդ պահվածքը, փորձը, բացի դրանից՝ փոքրիկն իրեն «սիրել է տալիս»:

Նման մրցույթները, Աշոտ Խաչատրյանի կարծիքով, երեխաների մեջ ձևավորում են ոչ միայն էթիկա, կարծիք արտահայտելու ունակություն, այլև սեր... Հպարտություն է տեսնել ինչպես է թուրքական հնագույն ամրոցում ծածանվում հայկական դրոշը:

ԱՄԻ ԱՆՏՈՆՅԱՆ



Նոր իրավակարգավորումներ

Խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունել է 33 օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը: Նոր Սահմանադրության 120-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ դրություն հայտարարելու լիազորությունը 33 նախագահի փոխարեն այլևս վերապահվելու է կառավարությանը: Նախագծով ամրագրվում են արտակարգ դրություն հայտարարելու վերաբերյալ նոր իրավակարգավորումները:

1. Արտաքին կապերի վարչության (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 21-3.2-13):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է արտաքին հարաբերությունների ոլորտին առնչվող թղթակցությունների գրավոր ու բանավոր թարգմանություններին, արտասահմանյան պատվիրակությունների և միջազգային ու դիվանագիտական կառույցների ներկայացուցիչների ընդունելության աշխատանքներին, արտասահմանյան պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումների վերաբերյալ արձանագրությունների և տեղեկանքների կազմման աշխատանքներին, միջազգային հանդիպումների, այցերի, ընդունելությունների արարողակարգի ապահովման գործընթացին, արտասահմանյան երկրներ գործուղվող աշխատակիցներին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի ապահովման աշխատանքներին, միջազգային հանդիպումների միաժամանակյա թարգմանության աշխատանքներին, Նախարարության օրենսդրական նախաձեռնություններին ու ծրագրերին:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 14.12.2017 թ., ժամը 10:00-ին, 33 արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթ-բաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

1-ին կետում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջազգային հարաբերություններ, կամ քաղաքագիտություն, կամ օտար լեզու, կամ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

- նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 2) ենթակետում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

2. Ներքին աուդիտի վարչության (այսուհետ՝ Վարչություն) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 21-3.2-17):

Վարչության պետի հանձնարարությամբ մասնակցում է ներքին աուդիտին, մասնակցում է աուդիտի ընթացքում բացահայտված կեղծիքի նշանների, աուդիտի սահմանափակումների վերաբերյալ անմիջապես տեղեկացնում է Վարչության պետին, իր կողմից իրականացված յուրաքանչյուր աուդիտի ավարտից հետո կազմում է հաշվետվություն և ներկայացնում Վարչության պետին: Իրավունք ունի աջակցություն ստանալ այն միավորների ղեկավարներից և աշխատակիցներից՝ որտեղ իրականացվում է աուդիտը, պատասխանատու աշխատակիցներից պահանջել աուդիտի համար անհրաժեշտ

33 արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է մրցույթ՝ Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

ցանկացած տվյալ: Վարչության պետին ներկայացնում է զեկուցումներ աուդիտի իրականացման սահմանափակումների՝ խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 15.12.2017 թ., ժամը 10:00-ին, 33 արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթ-բաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

2-րդ կետում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով, կամ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների, խորհրդակցականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

- նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 2) ենթակետում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

3. Քարտուղարության գործակալության կազմակերպման և արխիվային գործերի վարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 21-3.2-23):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Նախարարության մշտական և ժամանակավոր պահպանման ենթակա գործակալությամբ ավարտված փաստաթղթերի արխիվացման գործընթացին, արխիվային փաստաթղթերի փորձագիտական արժևորման, փաստաթղթերի ապահովագրման ֆոնդի ստեղծման և պահպանման աշխատանքներին, Աշխատակազմի ստորաբաժանումներին ընթացիկ գործակալության կազմակերպման աշխատանքներում ցուցաբերվող մեթոդական և գործնական աջակցության գործընթացին: Մասնակցում է արխիվային փաստաթղթերի՝ սահմանված կարգով պահպանման, օգտագործման, տրամադրման և Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից արխիվ հանձնման և փաստաթղթերի արխիվացման աշխատանքներին, Աշխատակազմի ոչ գաղտնի փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպման աշխատանքներին:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 19.12.2017 թ., ժամը 10:00-ին, 33 արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթ-բաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):



4. Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Արմավիրի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) բնակչության պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 21-3.1-52):

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծերի մշակման և սահմանված կարգով ներկայացման հաստատման աշխատանքներին, մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլանների և ծրագրերի մշակման աշխատանքներին: Իրականացնում է մարզի տարածքում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքման և վերլուծության աշխատանքները, մասնակցում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցման աշխատանքներին՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության առնչվող հիմնահարցերով:

Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Մրցույթը կկայանա 21.12.2017 թ., ժամը 10:00-ին, 33 արտակարգ իրավիճակների նախարարության շենքում (ք. Երևան, Դավիթ-բաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

3-րդ և 4-րդ կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

- նշված պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի 2) ենթակետում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի

անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանություն, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև նշված պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2):

Դիմող 33 քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

- տվյալ պաշտոնները զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրքույկային տեղանամակն կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանքը,

- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափի,

- անձնագրի պատճենը:

33 քաղաքացի մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր (նույնականացման քարտ):

33 քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրքույկային տեղանամակն կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 10.11.2017 թ.:

33 քաղաքացիները 33 արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Նախարարության աշխատակազմին (ք. Երևան, Դավիթբաշեն, 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8):

Քեռ. 012 31-78-65):

